ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ>>, <<ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ>> ԵՎ <<ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ>> ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2016թ.-ի գործունեության տարեկան ծրագրի 2-րդ կետը և Վերահսկիչ պալատի խորհրդի 2016թ.-ի փետրվարի 5-ի թիվ 4/4 որոշումը:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից իրականացվող ավտոճանապարհների պահպանում և շահագործման, պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների օրինականության և աւդյունավետության ուսումնասիրություն:

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը՝ 2015թ.-ի հունվարի 1-ից մինչև 2016թ.-ի սեպտեմբերի 1-ը:

Վերահսկողության իրականացման ժամկետը՝ 2016թ.-ի փետրվարի 8-ից մինչև 2016թ.-ի նոյեմբերի 14-ը:

<u>Վերահսկողության մեթոդաբանությունը</u>՝ Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման և վերլուծության ձևերը, ինչպես նաև համապատասխանության, կատարողական և ֆինանսական վերահսկողության տեսակները: Դիտարկման փուլում իրականացվել է վերահսկվող օբյեկտներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, կատարվել է տարբեր փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն: Վերլուծության փուլում համադրվել և վերլուծվել են դիտարկման ընթացքում արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքները՝

<u>I. Ավտոճանապարհների պահպանում և շահագործում</u>

Ծրագիրը ներառում է միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, գծանշման, մետաղական արգելափակոցների պահպանման և արհեստական կառույցների պահպանության և շահագործման աշխատանքները:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանություն

Պահպանման աշխատանքներն իրականացվել է ՀՀ կառավարության 04.10.2010թ թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգին (այսուհետ Կարգ) համապատասխան:

2015թ. և 2016թ. ճանապարհների պահպանման աշխատանքներն իրականացնելու համար կնքվել են 9,634.0 մլն դարմի աշխատանքների գնման համաձայնագրեր՝ 2015թ-ին 4,698.0 մլն դրամի (պայմանագրերը կնքվել են 2011թ-ին՝ 5 տարվա համար), իսկ 2016թ-ին՝ 4,936.0 մլն դրամի, 01.09.2016թ. դրությամբ կազմվել են՝ համապատասխանաբար 4,667.0 մլն դրամի և 3,680.0 մլն դրամի կատարողական ակտեր: Կնքված համաձայնագրերով 2015թ-ին նախատեսվել է իրականացնել ընթացիկ ամառային պահպանում 2978.9 կմ ճանապարհի վրա՝ ծրագրով նախատեսվածից 21.9 կմ-ով ավելի, ընթացիկ ձմեռային պահպանում՝ 3,464.66 կմ-ի վրա՝ նախատեսվածից 31.34 կմ-ով պակաս,

և 2016թ-ին նախատեսվել է իրականացնել ընթացիկ ամառային պահպանում 2,929.65 կմ ճանպարհի վրա՝ նախատեսվածից 0.3 կմ-ով պակաս, ընթացիկ ձմեռային պահպանման՝ 3,513.74 կմ ճանապարհի վրա՝ նախատեսվածից 3.74 կմ-ով ավելի:

2016թ-ի ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքներն իրականացվել են 2015թ-ին իրականացրած պարբերական մրցույթի արդյունքով, 39 լոտերով (տարածաշրջաններ), հաղթող ճանաչված ընկերությունների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում: Մրցույթին մասնակցելու հրավեր են ստացել 39 կազմակերպություն, սակայն յուրաքանչյուր լոտի համար հայտ ներկայացրել է մեկ կազմակերպություն:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ ավտոմոբիլային ճանապարհի վիճակը բնորոշվում է նրա շահագործողական հատկանիշներով, որոնցից կարևորագույնը ծածկի վիճակն է: Ավտոմոբիլային ճանապարհի վիճակի գնահատման հիմնական ցուցանիշ է սահմանվում ծածկի փոսայնությունը, լրացուցիչ ցուցանիշ է համարվում կողնակների և կողային ջրահեռացման առուների վիճակը: 2015թ. և 2016թ. ավտոճանապարհների վիճակի գնահատումն իրականացվել է միայն ավտոճանապարհի ծածկի փոսայնության հիման վրա, առանց հաշվի առնելու կողնակների և կողային ջրահեռացման առուների վիճակը:

2015թ-ի համար, միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների առկա վիճակի և պահպանման մակարդակների գնահատման արդյունքում, 75.4 կմ երկարությամբ ճանապարհահատվածի առկա վիճակը և սպասարկման պահանջվող մակարդակը փոփոխվել է, որի հետևանքով, 2014թ. համեմատությամբ, պահպանման ծախսերը ավելացել են 36.0 մլն դրամով:

Կարգի 15-րդ և 16-րդ կետերի համաձայն, հիմնանորոգման ծրագրերում 2015թ. ներառված 38.6 կմ երկարությամբ և 2016թ. ներառված 26 կմ երկարությամբ ավտոճանապարհահատվածները չեն ենթարկվել գնահատման և հանվել են ամառային ընթացիկ պահպանությունից, ինչի արդյունքում 2015թ. տարեկան պահպանման գումարը նվազել է 31.0 մլն դրամով, իսկ 2016թ. 8 ամիսներինը՝ 3.8 մլն դրամով:

Համաձայն Կարգի 11-րդ կետի 4-րդ և 8-րդ ենթակետերի՝ այն ճանապարհահատվածները, որոնց առկա վիճակը գնահատված է որպես վատ, ենթակա են հիմնանորոգման կամ վերակառուցման, և ենթակա չեն ամառային պահպանման: 2015թ. և 2016թ.՝ համապատասխանաբար 494,6 կմ և 383,83 կմ երկարությամբ վատ վիճակի գնահատված ճանապարհները, չեն ենթարկվել ամառային պահպանության, սակայն դրանցից 2015թ. հիմնանորոգման ծրագրում ներառվել է ընդամենը 69,5 կմ ճանապարահատվածը, իսկ 2016թ-ին՝ 51,6 կմ-ը:

Մեկ ընկերությունում, կատարված հանդիպակաց ստուգմամբ, ավտոճանապարհների ընթացիկ պահպանման աշխատանքներում Կարգով սահմանված չափանիշներից շեղումներ չեն արձանագրվել:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծումը կիրառվում է երթևեկության կարգավորման, ճանապարհից օգտվողներին նախազգուշացնելու կամ կողմնորոշելու նպատակով՝ դրանց անհրաժեշտության դեպքում: 2015թ. և 2016թ. պատվիրվել են՝ համապատասխանաբար 296920.6 քմ և 256473.5 քմ նշագծման աշխատանքներ, 01.09.2016թ դրությամբ ընդունվել են՝ համապատասխանաբար 280.0 մլն դրամի և 248.0 մլն դրամի աշխատանք:

Մետաղական արգելափակոցների պահպանում և վնասված հատվածների վերականգնում

2015թ-ին պատվիրվել է 518807 գծ.մ մետաղական արգելափակոցների պահպանման և 27164 գծ.մ վնասված հատվածների վերականգնման աշխատանքներ՝ գումարով 750.0 մլն դրամ: Կատարված աշխատանքների համար ընդունվել է 750.0 մլն դրամի կատարողական: 2016թ-ին պատվիրվել է 549450գծ.մ մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքներ՝ գումարով 747.6 մլն դրամ: 01.09.2016թ-ի դրությամբ ընդունվել է 498.4 մլն դրամի կատարողական:

Արհեստական կառույցների պահպանություն և շահագործում

2015թ-ին 3 թունելների և 5 կամուրջների պահպանության և շահագործման համար, կնքվել են 231.0 մլն դրամի պայմանագրեր, որոնց շրջանակներում ընդունվել են 222.0մլն դրամի կատարողականներ: 2016թ-ին նույն աշխատանքների իրականացման համար կնքվել են 242.0 մլն դրամի պայմանագրեր: 01.09.2016թ. դրությամբ ընդունվել են 159.0 մլն դրամի կատարողականներ:

<u>II. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում</u>

Ծրագրի նպատակն է Հանրապետության տարածաշրջանների միջև բնականոն կապը ապահովելու, երթևեկությունը ավելի անվտանգ, դյուրին և արագ դարձնելու համար իրականացնել տարիներ շարունակ շարքից դուրս եկած, դժվար անցանելի և վտանգավոր դարձած միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների քայքայված ծածկի վերականգնման, մաշված ծածկերի փոխարինման և հիմնանորոգման աշխատանքներ:

2015թ. և 2016թ. 40 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները կատարելու նպատակով իրականացվել է բաց ընթացակարգով գնման մրցույթ: Թվով 25 օբյեկտների դեպքում, յուրաքանչյուր օբյեկտի համար հայտ ներկայացրել է ընդամենը մեկ մասնակից: Բացառությամբ մեկ դեպքի, երբ մասնակցի հայտի մեջ չի նշվել կոնսորցիումի (համատեղ գործունեության պայմանագրի) մյուս մասնակցի անվանումը, և հայտում ներառված չի եղել համատեղ գործունեության պայմանագիրը, ինչի արյունքում շահել է հաջորդ ցածր գնառաջարկ ներկայացրած մասնակիցը, մնացած բոլոր դեպքերում հաղթող են ճանաչվել նվազագույն գին առաջարկած ընկերությունները: Հաղթող ընկերությունների առաջարկած գները կազմել են այդ աշխատանքների նախահաշվային արժեքների 78-ից 100 տոկոսը: Գնման արդյունքներով 2015թ-ին՝ 9 օբյեկտների հիմնանորոգման համար, կնքվել են 2,926 մլն դրամի պայմանագրեր՝ 31,8 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների վերանորոգման համար, իսկ 2016թ-ին՝ 31 օբյեկտների հիմնանորոգման համար, կնքվել են 2,965.0 մլն դրամի պայմանագրեր՝ 42.1 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների վերանորոգման համար: Նշված 40

օբյեկտներից միայն 13-ի աշխատանքների ավարտի ժամկետներն են սահմանվել մինչև 01.09.2016թ: Մնացած 27 օբյեկտների՝ 3,969.0 մլն դրամ պայմանագրային գնով, աշխատանքների ավարտի ժամկետները սահմանվել են մինչև 2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսները:

Այսպիսով, 2015թ. և 2016թ. կնքված 5,891.0 մլն դրամ ընդհանուր պայմանագրային գնով հիմնանորոգման աշխատանքների պայմանագրերի շրջանակներում 01.09.2016թ. դրությամբ կատարողականներով ընդունվել է ընդամենը 3,234.0 մլն դրամի աշխատանքներ:

<u>Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը</u> կազմելու համար 2015թ. և 2016թ. կնքվել են՝ համապատասխանաբար 19.0 մլն դրամի և 116.0 մլն դրամի պայմանագրեր, 01.09.2016թ. դրությամբ ընդունվել են՝ համապատասխանաբար 19.0 մլն դրամի և 109.0 մլն դրամի կատարողականներ:

<u>Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն</u> իրականացնելու նպատակով 2015թ և 2016թ կնքվել են՝ համապատասխանաբար 36.4 մլն դրամի և 34.6 մլն դրամի պայմանագրեր, 01.09.2016թ դրությամբ ընդունվել են՝ համապատասխանաբար 33.0 մլն դրամի և 4.6 մլն դրամի կատարողականներ:

III. Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում

2015թ-ին մեկ օբյեկտի հիմնանորոգման աշխատանքները իրականացման համար կնքվել է 1,018.0 մլն դրամի կապալի պայմանագիր, որով աշխատանքների ավարտի ժամկետը սահմանվել է 2017թ: 01.09.2016թ-ին կազմվել են ընդամենը 245.0մլն դրամի կատարողական:Նշված օբյեկտի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար 2015թ-ին կնքվել է 10.0 մլն դրամի պայմանագիր՝ շինարարական աշխատանքների ողջ ժամանակահատվածի համար: 01.09.2016թ. դրությամբ կազմվել է 2.4 մլն դրամի կատարողական:

2016թ-ին 5 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների համար կնքվել են 403.0 մլն դրամի պայմանագրեր, որոնցից

թվով 4 օբյեկտների աշխատանքների ավարտի ժամկետը սահմանվել է 2017թ.: 01.09.2016թ. դրությամբ կազմվել և ընդունվել է ընդամենը 22.0 մլն դրամի կատարողական:

2016թ-ին շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով կնքվել է 3.3 մլն դրամի պայմանագրեր: 01.09.2016թ. դրությամբ դեռևս կատարողական չի ընդունվել:

Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմելու համար 2016թ-ին կնքվել են 16.2 մլն դրամի պայմանագրեր: 01.09.2016թ. դրությամբ կազմվել են 15.8 մլն դրամի կատարողականներ:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. <<Ավտոճանապարհների պահպանում և շահագործում>> ծրագրում ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատումն իրականացվել է առանց լրացուցիչ ցուցանիշները հաշվի առնելու:

2. <<Ավտոճանապարհների պահպանում և շահագործում>>, <<Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում>> և <<Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում>> ծրագրերը ավարտված չեն՝ ընթացքի մեջ են, ուստի ծրագրերի ցուցանիշների կատարումը անհրաժեշտ է ուսումնասիրել և կատարման արդյունավետության վերաբերյալ եզրակացություն տալ հնարավոր կլինի ծրագրերով նախատեսված աշխատանքների ավարտից հետո:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝

Ձեռնարկել միջոցներ ծրագրերով նախատեսված բոլոր աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելու, ինչպես նաև՝ ծրագրերով սահմանված արդյունքային ցուցանիշների կատարումն ապահովելու ուղղությամբ: